

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԱՐԵՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. ՊԱՐՏԻՋՈՒՆԻ

ԱՐՈՎՅԱՆԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

«Ռուսաց քաջ հոգին էր, որ մեզ ազատեց»  
(Աբովյան)

Հայ գրականության պատմության մեջ Աբովյանի ուսանական օրինակալիան ումանք համարել են նրա աշխարհայացքի ամենափոքնիքի տեղերից մեկը: Ավելին՝ Աբովյանին հայտարարել են ցարիզմի նվաճողական քաղաքականության երկրպագու և դրանով իսկ աշխատել արժեզրկել նրա գրական հարուստ ժառանգությունը:

Սա միանգամայն հակասդաստական և գոեհիկ սոցիոլոգիական մոտեցում է մեծ լուսավորչի նկատմամբ: ՍՍՌՄ պատմության լուսավորչին դասագրքի կոնկուրսի կառավարական հանձնաժողովի որոշման մեջ պարզ ասված է, որ սխալ է հարցը քննել պատմական կոնկրետ պայմաններից անջատ և «18-րդ դարի վերջերին Վրաստանի անցումը Ռուսաստանի հովանավորության տակ» ինչպես և «Ուկրաինայի անցումը Ռուսաստանի իշխանության տակ» համարել բացարձակ չարիք. «Հեղինակները (դասագրքի — Վ. Պ.) չեն տեսնում, — ասված է այդ որոշման մեջ, — որ Վրաստանի առջև այն ժամանակ կանգնած էր երկրնաբանք — կամ կլանված լինել շահակա՞ն Պարսկաստանի և սուլթանական Թյուրքիայի կողմից, կամ թե անցնել Ռուսաստանի հովանավորության տակ, այնօրեա, ինչպես Ուկրաինայի առջև այն ժամանակ կանգնած էր երկրնաբանք — կամ կլանված լինել պահական Լեհաստանի և սուլթանական Թյուրքիայի կողմից, կամ թե անցնել Ռուսաստանի իշխանության տակ: Նրանք չեն տեսնում, որ երկրորդ հեռանկարը, այնուամենայնիվ, փոքրագույն չարիքն էր»<sup>1</sup>:

<sup>1</sup> «Նորհրդային Հայաստան», 24 օգոստոսի, 1937 թ.:

Այս ամբողջությամբ վերաբերում է նաև Հայաստանին, որ մինչև 19-րդ դարի քառասական թվականները գտնվում էր խառնական Պարսկաստանի և «Ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական աստիճանի վրա գտնվող» (Մարքս) սուլթանական Թյուրքիայի իշխանությունների տակ: Նույնպիսի երկընտրանք դրված էր նաև Հայաստանի առաջ՝ կամ կուզ դնալ պարսկական և թյուրքական իշխանություններին՝ կամ անցնել Ռուսաստանի հովանավորության տակ:

Այդ թվականներին, մանավանդ, անասելի ծանր էր հայ ժողովրդի վիճակը: Դաժան ու վայրենի նվաճողները ամբողջում, հրո ճարակ էին դարձնում հայկական քաղաքներն ու շենքերը, բնաջնջում աշխատավոր ժողովրդին, ոչնչացնում նրա կուլտուրան: Արևելահայաստանում իշխում էր պարսկական վայրագ ուժի մեծ կամայականությունը: Սարդարի կամքը, նրա բնահաճույքն օրենք էր. «Հայաստան աշխարհը շատ վախտ էր նեղության, ավերման տակ ընկել, ամա էս ամենիցը անց կացավ,— գրում է Աբովյանը,— սար ու ձոր դառել էր գողի, ավազակի բնակարան: Ամեն կողմից պարսիկք է՛նպես ոտը բարձրացրին հանկարծ, որ էլ դեմ կենալու ճար չկար»:<sup>1</sup>

Հայ ժողովուրդը դրված էր իրավազուրկ ստրուկի վիճակում. «Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղլուշաղը: Քար չկա մեր երկրում, բոլ չկա, որ հայի արնովը ներկած չլի... Սրանց ամեն մեկի սրտումը հազար թուր կա ցրցված»:<sup>2</sup> Աբովյանը սոսկումով ու զգվանքով է հիշում ու նկարագրում պարսկական բռնակալության սիմվոլ, հայ և ադրբեջանական աշխատավոր ժողովրդի արյունով շաղախված «հազար գլխանի զև» Երևանի բերդը: «Դժոխք», այսպես է արտահայտվում Աբովյանը Պարսկահայաստանի մասին: Նա նկատել է ու «վերք Հայաստանի» վեպում ավերակում է գերիներ վաճառելու, ինչպես և արևելյան բարբարոսության ամենազգվելի մի ձևի՝ աղջկա ժողովի և մանկաժողովի երևույթների մնացորդների գոյությունը Հայաստանում. «աղլիկ ասես, տղա, հարսը, երեխա ծծկեր... Պարսա գեղերիցը եսիր էին բերել» տանում էին «չա սարդարին փեշքաշ անեն, չա Ախլըլիսա ծախեն»<sup>3</sup>,— գրում է Աբովյանը և ապա ոչ միայն պատմում, այլև ցուցադրում պարսկական բռնությունների մի քանի ցնցող պատկերներ, ցանկանալով մոտավոր պատկերացում տալ

<sup>1</sup> Աբովյան, Երկերի ժողովածու, 1939—40 թ. Թ. հատոր 1-ին, էջ 143:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 107:

<sup>3</sup> Նույն տեղ, էջ 108:

քսն ժամանակվա մեր «աշխարհի հալի» մասին: «Էկերքում» Հասան խանը մի քստմենկի հրաման է արձակում, որից երևում է նրա պատժական սխտենի ողջ վայրագությունն ու դաժանությունը.

«Փշրեցե՛ք, ջարդեցե՛ք, ոտն ու ձեռ կտրեցե՛ք:  
Առաջ փորն, հետո գլուխն էրեցե՛ք, շամփրեցե՛ք:  
Մատները հաղըհան, ձեռները կաշըհան  
Արե՛ք, մեջքն կրակին դեմ արե՛ք, խանձեցե՛ք:  
Կտրած ձեռն, ոտն ու մատն եղումը դաղեցե՛ք:  
Ու շուտով սպանի, իր գլուխը կթռչի:  
Ուտուով ու լավաշ կամ կաշին հանեցե՛ք,  
Կամ գլուխը քերթեցե՛ք, կամ աչքերն փորեցե՛ք:  
Խո՛ղ՝ ոտներն էրվելիս՝ աչքը տեսնի, սիրտն էրվի.  
Խո՛ղ ձեռներն կտրելիս՝ բալքի թև ա՛հ ընկնի  
Սիրտները ու դարձ գան, մեր հավատն քնդունին:  
Խալը թողան, դուռանին գլուխ տան, մերն ըլինո:  
Հասան-խանն անիրավ էս հրամանն ասելով՝  
Կրակին էր տալիս սուրբ մանկանցն՝ տանջելով»:<sup>1</sup>

Քանզվի էսպես տերությունը, — գրում է մինչև իր զգալուն հոգու խորքը հուզված Աբովյանը:

Բնական է, որ Հայաստանը միայն սեփական ուժերով չէր կարող ազատվել բռնակալի լծից, իսկ մնալ այդ լծի՝ տակ կնշա-նակեր ժողովուրդը հնթաբեկի լիակատար ֆիզիկական բնաջնջման վտանգին: Ուստի դեռ շատ վաղուց արժանիվել էր մի հզոր պե-տություն իշխանության տակ անցնելու հարցը: Իրեն այդպիսի պե-տություն, դեռ 18-րդ դարի սկզբից, հայրենիքի փրկության մասին մտածող առաջավոր մարդիկ, նկատի էին ունեցել Ռուսաստանը: Այդ հարցը նոր թափով վերարձարժվեց, մանաթանգ, երբ Վրաս-տանը միակցվեց Ռուսաստանին:

«Վերք Հայաստանի»-ում Աբովյանը պատմում է, որ Լազի, Զաչան, Զերքեդ, Ղազախ, Բորչալու, Շամշադին, բոլոր Կասպից գավառները՝ «թև էին առել, որ թռչին ու ուխ իշխանությունը ստանան»:<sup>2</sup>

«Տե՛ր աստված՝ դու մեր ռուս թաղավորի սիրտը ռահմ քցես, որ գա, մեզ ազատի՛, բնշանք մահ մի՛ տար մեզ, մինչև նրանց»

<sup>1</sup> Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 141.

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 143:

երեսը տեսնինք».— ասում է «Վերքում», մի գյուղացի ընդհանուր հավանության միջնորդ տոմ: Պատմական փաստաթղթերը ևս վկայում են, որ ժողովուրդը ցանկացել է անցնել Ռուսաստանի հովանավորության տակ:

1805 թվին երեսնի հայ և աղբրեջանական բնակիչները իրենց մի գիմումի մեջ խնդրում են շտապեցնել ռուսական օգնությունը. «Անհամբեր սպասում ենք ձեր վաղընդփույթ օգնության,— գրված է այդ թղթում,— եթե ուշացնեք այն ժամանակ մեզ կտանեն և կվնասեն... Ամենայն ինչ գրում ենք ձեզ և թողնում ձեր կամքին, եթե մեզ պետք լինի թղթի վրա նկարագրել թե ինչ ներդրումներ ենք կրում, այն ժամանակ ոչ թույլի և ոչ մեկան կրավականանա»<sup>1</sup> Պատմական խորաթափանցությամբ Աբովյանը ղեռ 19-րդ դարի առաջին կեսին դարձավ հայ ժողովրդի, ռուսասիրության, ռուսական օրինետացիայի ջերմ պաշտպանը, հայ ժողովրդի նվիրական ցանկությունների ու տենչերի հարազատ արտահայտիչը:

Աբովյանը նղրայրական վրաց և հայ ժողովուրդների փրկությունը ռուս հզոր ժողովրդին միանալու, Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու մեջ էր տեսնում: Իր այդ համոզումը Աբովյանը տվել է հետևյալ գեղեցիկ, միաժամանակ սիմվոլիկ, պատկերով «մեկ ահագին շորս ջաղացի շուր, դուս ա պրծնում, գնում երևանու դաշտը՝ նրա սև ջրի դառը արտասուքը իր հետ խառնի... գնա... ու տրտում երասխի հետ՝ Զանգին ու Գառնու գետն էլ մեջ անեն... գետն Քուռն էլ մեջ անեն, իրանց արտասուքը նրանց հետ խառնեն ու տանին, Կասպից ծովի սիրտն անեն, նրա աղի ջրումը կորչին, Պարսից նավերը ջախրփուրթ անեն, ռուսաց նավերը իրանց քաժակի վրա տանին ու բերեն, որ ճամփին չհուսահատվի, չբեզարի ու էն իր բարի ոտը մեր աշխարհքը չկրտրի, որ բալբի մեր հայրենիքը՝ նրանց արծվի թևերի տակին դրանա, մեծանա, դարդերը մոռանա ու էլ հեղ՝ իր առաջին փառքին հասնի»<sup>2</sup>:

«Մտածումը ի տեսիլ հայրենեաց» ինչպես և մի քանի այլ բանաստեղծություններում Աբովյանը դրանվորելով իր խորը ատելությունը պարսկական բռնակալության՝ «հարավի խորշակի» նրկատմամբ, սիրով է խոսում հայ ժողովրդին կարկառած ռուս ժողովրդի «հզոր բազկի» մասին.

<sup>1</sup> Աբովյան, երկերի ժողովածու, հատոր, 1-ին էջ 43:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 134—135:



«Այս հզոր բազուկ՝ որ զմեզ տածէ,  
Այս հողմ զուարթարար ի հիւսիսեան ծոցոյ,  
Գրկեացէ՛ ամուր, հարցէ՛, մեղմեացէ՛  
Զայն ջերմ, հրաբորբոք խորշակ հարավոյ:

Սրբոյն Ռուսիոյ զաւակը քաջաջան,  
Կրկին կանգնեացն՝ն զմեր քակ, ավերակ,  
Արծույն հիւսիսոյ ընդ թևօք տիրական  
Կրկին զօրացուր որդիրս հարազատք»<sup>1</sup>

Փրկութեան հուշները կապելով Ռուսաստանի հետ, հայ ժողովուրդը չի խնայել իր ուժերն ու հնարավորութիւնները նրան օգնելու հարցում: «Վերբում» Արքայանը պատմում է, որ ղեռ Յիցիանովի ժամանակ հայերն էին ռուսական զորքին «հաց տվողը, ռսի քոմակը»: Ժողովուրդը զենքը ձեռքին ևս օգնել է ռուսներին, դրանով իսկ ավելի բորբոքելով պարսիկների վայրագութիւնը: Ղազախի աղապարներին դրած թղթում պարսից գահաժառանգ և զորապետ Աբրահա Միրզան աւում է, որ «հայերը հավատարիմ են Ռուսիային»:<sup>2</sup>

1826 թ. հուլիսին, երբ այդ նույն Աբրահա Միրզան 60 հազարանոց բանակով հարձակվում է Ղարաբաղի վրա, և ծանր դրութիւն ստեղծում ռուսական փոքրաթիվ զորքերի համար, հայ ժողովուրդը, բարոյական, նյութական օգնութիւնից զատ, զենքով է դուրս գալիս ընդդէմ պարսկական ներխուժման: Նկարագրելով ձուլարարքի խաչում տեղի ունեցած կտտաղի հակառակորդները (Հասան խանը հարձակվել էր Շորագչալի և Փամբակի վրա) Արքայանը ցույց է տալիս, որ այստեղ ևս ժողովուրդը հերոսաբար, մինչև վերջին շունչը կտնել է պարսկական զորքի դեմ, օգնել ռուսներին:

«Շարյուր անգամ պարսից սևագունդ զորքը զուարին, երիշ քաշեցին, ամեն անգամ էլ հարյուրով կոտորվեցան. իրանք իրանց լաշերի վրովը էլի եղ փախան, շունչ առան՝ էլի կրկին եկան, էլ կրկին մեկ բուռը խալխի թվանքի համն առան, էլի ամոթով եղ դարձան: Ո՛չ նաղի խանն էր կարում իր հունարը ցույց տալ, ո՛չ Օրջուղ աղեն, ո՛չ Սվանդուպի-խանը, զազախ, քուրդ, սարվազ՝ ինչ տղամարդութիւն ունենին՝ թափեցին՝ ո՛չ նիզամով կարացին, ո՛չ երշով մեկ քանի հողագործի տուն առնեն: Որտեղ մոտանում էին՝

<sup>1</sup> Արքայանի արխիվ, գործ № 105:

<sup>2</sup> Акты, том II, стр. 565. նաև՝ «Փորձ», 1877—78, № 2, էջ 396:

տան դռներիցը, սելի արանքներըցը թվանքները էնպես էին ճոռում,<sup>1</sup> որ շատ պարսիկ իր ընկերին էր ուռնատակ տալիս»։<sup>2</sup>

Երբ ռուսական բանակները հարձակման են անցնում, նրանց զինելու համար սկսում են կազմակերպվել հայկական կամավորական խմբեր։ 1827 թ. մարտի 15-ին «հայոց կամավոր գեղի զինվորության երգվեցնելու, դրոշակի օրհնության» և ուղղամահաս ուղարկելու օրը հայրենասիրական ջերմ ճառ է ասում ժամանակի նշանավոր մանկավարժ և բանաստեղծ, Արտվյանի ուսուցիչ Հ. Ալամդարյանը։

Խոսելով հայ ժողովրդի ռուս զորքին ցույց տված օգնության մասին, Արտվյանը գրում է. «ինչ որ պարսից կովի ժամանակ հայք արին... թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտան։ Հալբաթ որ մեկ օր մեկ արդար, անաշառ մարդ վրաստանու պատմությունը կգրի, էն ժամանակ կերևի թե հայք ի՞նչ արին, ի՞նչ հավատարմություն են ցույց տվել տերությունը, ի՞նչ արին են վեր ածել»։<sup>2</sup> Ռուս-պարսկական կովի մասնակից ռուս սպաները ևս պատմում են, որ հայերը քաջաբար էին կռվում։

«Ի տրիտուր» հայ ժողովրդի օգնության, նիկողայ առաջինը հրովարտակ է գրում ներսեռ Աշտարակեցուն, շնորհակալություն հայտնելով հայ ժողովրդին՝ ռուս զորքին ցույց տված նրա օգնության համար։

Աշտարակեցին այդ հրովարտակը բաղմացնել է տալիս, «Հռչակ ողորմության ինքնակալի» վերնագրով և տարածում ժողովրդի մեջ։ Արևելահայաստանի միակցումը Ռուսաստանին կատարվեց՝ 1827 թվին, երբ ռուսական զորքը մտավ Երևան։

Ժողովրդի համար դա աներևակայելի մի տոն է եղել։ «Թուրք ու հայ հենց իմացան թե աստված վեր էկավ իրանց համար»,— գրում է Արտվյանը, «բախտավոր հրճվանքով խանդավառված» (իր բառերն են— Վ. Պ.) և նկարագրում «հրեշտակ փրկիչ ռուս ժողովրդի» զինքով կործանվող հայակույ, «հազար զլխանի դե» Երևանի բերդը. «Ամսի 25-ն էր (1827 թ. սեպտեմբերի 25-ը— Վ. Պ.) որ Երևանու բերդը ծխումը կորավ։ Հինգ օր հինգ գիշեր սար ու ձոր դրժքում, դմբքում էր։ Հենց դիտես Սողոմ Գոմորի քուրուրթն ու կրակը էս օր ա վեր գալիս։ Երևանու բերդը ձեթը հատած պատուրի պես թե մեկ ճրճթում էլ էր մեկ սհաթ քիմի, էլ եղ հանքում, խավարում էր, էնքան թուփի գլուլա էր գլխին ու

<sup>1</sup> Արտվյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 119.

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 143.

սրտին դիպել, հոգին բերանը հասցրել... Սարգսրը, Շահազան վաղուց էին իրանց սև օրը լաց ընկնով նրեանու երկրիցը ձեռ քաշել, Իրան փախելու<sup>1</sup> Ապա քիչ հետո Արովյանը շարունակում է բերդի առժան նկարագիրը. «Սալդաթի տուտը հենց բերդը մտավ թե չէ՝, հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասուքը էլ չէին թողնում, որ մարդի բերան բաց ըլի: Բայց ով սիրտ ունեւր, լավ էր տեսնում, որ է՛ն ձեռներն, է՛ն աչքերը, որ քարացել, սառել երկնքին էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ՝ ասում էին, որ զժոխքի քանդվելը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես նրեանու բերդի առնիլը հայերի համար... Շատը (ժողովրդից— Վ. Պ.) ընկնում էին սալդաթների մտովն ու էնպես նվազած, հոգին քաշված մնում: Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի հայր իրանց գլուխն էին թրի տեղ թշնամու ձեռք բցել, է՛ս օրը, է՛ս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել»<sup>2</sup>:

Երախտագետ Արովյանը շնորհակալության առաջին խոսքն ուղղելով ռուս մեծ ժողովրդին, գովում է նրա «քաջությունը, մեծահոգությունը, բարեսրտությունը և մարդասիրությունը»: «Ուրիշ թշնամու առաջ իրանց արխին էին տալիս, եղո իրանց բաղաքն ու օլլուշաղը, ռուսաց ընդհակառակն բանալիքն էին ընծալում, եղո իրանց տունն ու ընտանիքը... Ռուսաց մարդասիրության շնորհքը ապառաժն էլ կաղկացրին»<sup>3</sup>:

2. Թումանյանը բերում է ռուս զորքի նրեան մտնելու ակտի ականատեսներից մեկի՝ Ն. Ն. Լաշինովի վկայությունը հայի և ռուսի խիստ ջերմ ու սրտաշարժ հանդիպման մասին: Լաշինովը ծնկարազրում է,— գրում է Թումանյանը,— տաճկական, պարսկական, բրդական զաղանությունները, պատմում է, թե ինչպես էին նրանց առաջ սարսափահար փախչում հայերը գեղահան ու տեղահան եղած:

Պատմում է, թե ինչպես էին նրանք վազում դեպի ռուսական զորքերը, ձեր ու մանուկ, մարդ ու կին, աղաղակելով русь! русь! здрасти! здрасти! Եվ էդ մի բառով էին արտահայտում ամեն բան, և՛ սարսափ, և՛ աղաչանք, և՛ սեր, և՛ խնդիր, որովհետեւ չեզու չգիտեին: Իսկ մյուս կողմից. не бойтесь! не бойтесь! ձեն էին տալիս սարսափահար գյուղացիներին թշնամու դեմ վազող զինվորներն ու արագացնում էին իրենց վազքը... Նա, Լաշինովը, պատմում է, թե ինչպես սրտառու ժանդարմաբյաժը էր դիմա-

<sup>1</sup> Արովյան, Երկերի ժողովածու, հ. 1-ին, էջ 207:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 208:

<sup>3</sup> Նույն տեղ, էջ 205:

վորում իրենց՝ հայ կեղեքված ու տանջված ժողովուրդն ամեն տեղ, ինչպես էր աղոթում, լալիս ուրախությունից, թե նույնիսկ էն երեսն էլ որ նոր էր սկսել թոթովել, իրենց տեսնելիս ինչպես էր կանչում «Здрастуй! Здрастуй!»: Իսկ մյուս կողմից ռուս օֆիցերներն էին գանգատվում, թե հայերին օգնության գալիս անկարելի էր կարգ պահպանել զորքի մեջ, զինվորական շարքերում, որովհետև ամեն մի զինվոր առաջ է նետվում ավելի շուտ օգնության հասնելու համար և խանգարում են կարգը: Անկարելի է լինում կարգ պահպանել: Էսպես. էն լացախառն ու աղոթախառն «Здравствуй»-ներով ողջունում էր բազմատանջ հայ ժողովուրդը ռուսական ազատարար բանակին, հենց էնպես աղոթելով ու արտասուքով էլ արձանագրվեց և հավերժացավ «Վերք Հայաստանի»-ի մեջ ինչպես էն «ի խորոց սրտի» խոսքերից մինը, որ երբևիցե արտասանել է հայ ժողովուրդը աշխարհի առաջ, և իր մշտական տառապանքի մեջ էլ միայն այն ժամանակ է մի իրական օգնություն տեսել, երբ հենել է եղբայրական հուժկու «Не бойтесь!»):<sup>1</sup>

Իբրև պարսից բռնակալության դեմ հայ ժողովրդի անհուն ատելության և Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու ջերմ ցանկության արտահայտիչ, Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմական վեպում, հանդես է գալիս Աղասին: Նա սպանում է Սարգարի ֆառաշներին, շուրջը հավաքում հայ քաջ երիտասարդներին, իր խմբով շարունակելով պարտիզանական հանդուգն ու անհավասար կռիվներ մղել Հասան խանի «ղոնշունի» և հայկական դյուղերը թալանող ու ավերող քրդերի դեմ, վերջը միանում է ռուսական զորքին, դառնում «ուսի ապելատով» «աֆիցեր» և ռուսական զորքի հետ միասին մտնում Երևան: Աղասին դառնում է ժողովրդի սիրելին, որովհետև կռվում է ատելի զղրաշի դեմ և «զուխը եզ է դրել, որ ոսին դուրբան անի»: Ով նրա արածն իմացել էր, ուզում էր ոտները ջուր անի խմի», ասում է Աբովյանը: Աղասու արտակարգ հանդիսավորությամբ կատարվող թաղմանը մասնակցում է հայ ժողովուրդը և ռուս զորքը, այդ ակտի մեջ, սիմվոլիկ ձևով, մարմնավորելով հայ և ռուս ժողովրդի տերն ու բարեկամությունը և քաղաքական դաշինքը:

Աբովյանի ժամանակակից գրող Մ. Թադևոսյանը ևս ողջունել է Արևելահայաստանի Ռուսաստանին միակցվելը և ջերմ աշխույժանք ուղարկել երևանյաններին. «Աչքներդ լույս,— գրում է

<sup>1</sup> «Հարիզոն», 1912 թ. № 196, Լալինովի «Исповедь»-ից քաղվածքներ, տես «Кавказский Сборник», том II.



նա,— մեր քաղցր աշխարհը պարսից դառն շարժարանքից ազատվեց»։

Հայաստանը Ռուսաստանին միակցելու պատմական մեծանշանակ ակտը այնքան է ոգևորել ժողովրդին, որ նա դրա շուրջը երգեր է հյուսել և երգել։

«Հարիր տնտակ խաղ հայերեն, թուրքերեն երևանու թաղերն ու ձորերը լսում էին ու հինգ տարնկան երեխան էլ էսօր ուրախ վախտը ձեռը բերնին ա դնում ու ասում,— պատմում է Աբովյանը,— որ ասածին ամեն մարդ հավատա, էն խաղերից մեկը թող օրինակի խաթեր էստեղ գրվի».

Մատաթովն Ղարաբաղ ատավ, ազատեց,  
Կրասովսկին Աբարան ոտնատակ տվեց,  
Սաղ Իրանն Պասքովիչն չոքեց, ծունը դրեց.  
Ղզրաշն մով դառած՝ գլխին վայ տվեց.  
Քեկեն դորֆն Սարգսրին չախըփուրթ արեց,  
Ասլանի գլովան արծվին՝ ուսան մատաղ արեց,  
Անիրավ՝ հայերի արինն մի՛ խմի,  
Միտք արա՞ էս բաղին բաղմանչի ունի...»

Կամ՝

«Մենք քամակ քամակի կտանք, վեր կկենանք,  
Ռսին մեր աշխարհը, կյանքը ղուրբան կտանք»։<sup>1</sup>

Երևանի Դրական թանգարանում մինչև այժմ էլ պահվում է հայ աշուղ Սեֆի Յուսուֆի ասած հրգը Երևանի դրավման մասին, որը դրի է առել Աբովյանը իր կազմած ժողովրդական երգերի տնտրակներից մեկում՝ Բողկնշտետին ուղարկելու համար։<sup>2</sup>

Աբովյանը հասկանում էր Հայաստանը Ռուսաստանին միակցվելու ակտի կարևոր նշանակությունը։ Ռուսաստանը իր տնտեսությամբ, վարչաձևով, կուլտուրայով, գրականությամբ, գիտություն համեմատ բարձր էր միջնադարյան, ֆեոդալա-խանական Պարսկաստանից։

Հայաստանի Ռուսաստանին միակցվելով կարևորագույն ու նոր էտապ էր սկսվում հայ ժողովրդի պատմության մեջ, ժողո-

<sup>1</sup> Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր I-ին, էջ 206։

<sup>2</sup> Աբովյանի արխիվ, գործ № 62։

վորդը ոչ միայն ազատվում էր կորստից, ֆիզիկական բնաջնջման վտանգից, այլև հնարավորություններ էր ստանում երկրի հետագա զարգացման համար:



Սակայն ցարիզմը թեև սյարսկական բռնակալության համեմատությամբ «փոքրագույն» շարիք էր, բայց և այնպես շարիք էր: Հայաստանի Ռուսաստանին միակցվելուց մասնավանդ որոշ ժամանակ անց, պարսիկ խաների և ֆառաշների վայրագություններից ազատված ժողովուրդը ենթարկվեց ցարիզմի հայահալած քաղաքականությանը: Ոչ ուս ազգերին և ժողովուրդներին համարելով «ստոր ուսայի» ներկայացուցիչներ, «ալլաղգիներ», ցարիզմն ու նրա գործակալները ժարհամարհանք ու ատելություն էին դաստիարակում նրանց հանդեպ»:<sup>1</sup>

«Երկար տարիներ,— ասում է ընկեր Մուստոֆը,— համարյա մի ամբողջ դար, ընդհուպ մինչև Խորհուրդների իշխանության հաղթանակը, տաղանդավոր հայ ժողովուրդը գտնվում էր ուսուսկան ցարիզմի կրնկի տակ: Մանր հիշողությունները ցարական ինքնակալության ճնշման մասին, այն ճնշման, որին ենթարկվում էր հայ ժողովուրդը ռուսական կալվածատերերի, կապիտալիստների, գնեւրալների, տերտերների ու շինովնիկների կողմից, գեո երկար ժամանակ կապրեն Հայաստանի աշխատավորների մեջ»:<sup>2</sup>

Ցարիզմից դժգոհ էր ինչպես ռուս, այնպես և հայ աշխատավոր ժողովուրդը: Ռուս մեծ և պայծառ գրականության մեջ վաղուց էր ակավել ցարիզմի ու ցարական բյուրոկրատիայի մերկացումը: Պուշկինը, Լերմոնտովը, Գոգոլը, Բելինսկին և մյուս առաջադեմ մարդիկ հակացարական սպանիչ ելույթներ էին ունենում և հալածվում ցարիզմի կողմից:

Այս բոլորը չէր կարող չնկատվել Արովյանի կողմից և նրա դժգոհությունը շառաչացնել ցարիզմի ու կապույտ մոնղիլաւորների նկատմամբ:

Արովյանը, որ լավ ծանոթ էր սյարսկական և թյուրքական բռնություններին, և ապա ուսումնասիրել էր Հայաստանի վիճակը նաեւ նրա՝ Ռուսաստանին միակցվելուց հետո, մեղ բավական նյու-

<sup>1</sup> Համ Կ(բ)Պ Պատմության համառոտ դարձնից, 1938 թ., էջ 71:

<sup>2</sup> «Պորչրդային Հայաստան», 1936 թ. հունվարի 6: Սովետական Հայաստանի աշխատավորության պատվիրակների ընդունելության ժամանակ, 1935 թ. դեկտ. 30-ին, Գրեմլում ընկեր Մուստովի արտասանած ճառից:

թեր է տալիս 19-րդ դարի երկրորդ քառորդի հայ իրականության մասին: Այդ շրջանի գյուղացիության դասակարգային շերտավորման պրոցեսի ուժեղացման հետ միասին, սկսվում է ձևավորվել գյուղական պրոտարությունների մի շերտ, որը դաշնակցած ցարական շինովնիկության հետ կեղեքում է գյուղացուն, շահագործում նրա արյունը քրտինքով վաստակածը: Այդ մասին է խոսում Աստախան գյուղի գյուղացիների «խալով ու ողբով» գրած «աղաչանաց թուղթը» առ «ամենաօգոստափառ մեծ միապետն ամենայն ուսաց»-ին (գիմումը գրել է Աբովյանը, ստորագրել են 50 գյուղացի): Այդտեղ գյուղացիները հայտնում են «ամենաողորմած կայսեր», որ գյուղի կառավարիչ Ղազարը «վայրապար նեղում է և տանջում» իրենց, բազմաթիվ կեղծ գործարքներ է կատարում և իրենք պարտավոր են դրանց համար վճարել, նա գյուղացիներին ձրի աշխատեցնում է իրեն համար, մինչև իսկ «ի կանանց այրեաց առնու հարկս» և երբ գյուղացիները ընդդիմանում են այդ բռնություններին, նա «բերել Ղազարս ի Մօվրովէն և աչքան զանէ զմեզ, մինչև տարեկափ ժամանակն անկանիլ ի մահիճս հիվանդութիւնէ»:<sup>1</sup> «ազատեցեք զմեզ», — աղերսագին խնդրում են թագավորից գյուղացիները, շիմանալով, որ այդ ղազարները (որոնցից հետո Միկիտան Սաբոնների և Բալասան աղաների կատարելատիպերը պետք է ստեղծվեն) գործում են ցարիզմի գործակալների հետ միասին, հենց ցարիզմի քաղաքականության հար ու նման: Աբովյանը մերկացրել, երբեմն էլ երգիծաբանության նյութ է դարձրել ցարիզմի ներկայացուցիչների գործունեությունը Կովկասում: Դեռ «Վերքում» նա նկարագրում է, թե ինչպես դրանք դեռ Կովկասյան սարը շտեմած, «գինու ումբին որ տեսնում են, երեսներին խաշ են հանում, կամ շիրախանումը քնում, կամ քուր ու սերքով գրավ դնում, կամ թե չէ ցխում, ձնում վեր ընկնում, երազ տեսնում, դելլ տալիս»:<sup>2</sup> Կովկաս եկող թուր ու սերթով ունեցող մարդիկ ցարիզմի գործակալներն էին անշուշտ: Այդ քննադատական գիծը դարգանում է «Հաղարփեշեն» երգիծաբանական գործում, գրված այն «բարի» մարդկանց մասին, որոնք «մեր խալխին (հայերին և վրացիներին — Վ. Պ.) փուղն են դնում»: Առաջաբանում Աբովյանը բացատրում է այդ երգիծաբանության դրդապատճառը: «Ո՞վ չի գիտի որ տեղից վեր կենողը հենց մեր խալխի վրա ա ոտը բարձրացնում», ծաղր ու ծանակի ենթարկում մեր ազգին, «գրով, լեզ-

<sup>1</sup> Գրական Թանգարան, Աբովյանի արխիվ, գործ № 589,

<sup>2</sup> Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 44. Ընդգծումը մերն է, Վ. Պ.

վով» խայտառակ անում, «կամենալով մեր խաչիսի բնությունը էսպես իմաստուն մարդկանց բնության հետ մի քիչ համեմատել, էս մեր Հազարփնշեն մեջ բերի»<sup>1</sup> Ապա սկսում է նկարագրել մի «իմաստուն» մարդու, որը կովկասցու մասին լսելիս, զահւան գնում է, թուք ու մուր թափում, թե «էսպես երկրումը շունը չի կենալ» և ասիստում, որ էդպես լավ հողերը «էսպես հիմար մարդկանց ճանկումն են» և ոչ թե իրենց: Մի օր էլ, բախտի դժբախտ բերմամբ, «սաստանի քամին» նրան գցում է կովկասի սարի այս կողմը, ուր ասիացիների կողմից լավ հյուրասիրվելուց հետո այդ «իմաստունը» տմարդի կերպով «զուելի» կանչելու, սպանելու, շարդելու մասին է մտածում, զարմանում, որ դրանք այնքան «մարիֆաթ» չունեն, որ «ջուրն էլ փողով ծախեն, այլ իրենց հացն ամենքի առաջրն են ածում»: Ի հակադրություն դրա, նա շարագրում է իր իդեալը.

«Փող պտի շինած ու ծոցը դրած.  
 Լավ հաքած, մաշած ու կառնթ լծած,  
 Բալ տալ, բալ գնալ, իր փառքը ցույց տալ.  
 Մոտովդ անցնելիս երեսդ շուռ տված.  
 Ինչ ունիս, գլխիդ, ոտիդ խարջ արած.  
 Լավ տեղ ու լավ չին, լավ նշան ճարած»<sup>2</sup>

Իսկ և իսկ ցարական շինովնիկի պատկերացում կյանքի մասին: Նա իր պրակտիկայից եկել է այն համոզման, թե անպատիժ Կերպով կարելի է կովկասցուն թալանել:

«Ասիացի մարդն զակոնն ի՞նչ գիտի,  
 Որ քեզ հետ խոսա կամ համարձակվի:  
 Գլխին տո՛ւր, զրադին կանգնի՛ր, քեֆ արա՛,  
 Զերդ լցրո՛ւ, քո երկիր գնա՛:  
 Ո՛ւլ ա հարցնում, կամ գլուխդ կտրում»<sup>3</sup>

Այս միջոցին էլ նա փորձում է դիմել, հարբած տեղից վեր է թռչում «գիժ կովի նման» և սպառնում «նրանց բոլորին տանի պոխիցեն անի»<sup>4</sup> բայց ընկնում է մեկ «չիրի կարասի», մեկ «նավթի պղնձի» մեջ և շարունակում հայհոյել: Երբ «ասիացիների» համ-

<sup>1</sup> Արտվյան, Երկերի ժողովածու, հատոր 2-րդ, էջ 391.

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 156.

<sup>3</sup> Նույն տեղ, էջ 157.



բերութիւնը հասնում է, նրան այնպես են խփում, որ «հային օրհնելով, վրացուն գովելով» ընկնում է «օջախի քյաբաքի վրա» — նա իրեն կողմնակից շինովնիկներին է կանչում.

«Ամա մեր խալխի մուշտու հունարը  
Դեռ չէին տեսել, որ իրանց ձեռը  
Թոխմախ-գլխնեղով բալի տակ շքցնու  
Հենց պլգովնները լցրին ուշուցով,  
Դուտակ ու շելմա՝ էկան ձեն տալով,  
Մեր հայու մուշտին, վրացու քացին  
էնպես թունդ դիպավ նրանց գլխին, փորին,  
Որ ամեն մեկը հազար տեղ շոքեց:  
Թխկաց, գրկկաց, հազաց ու պառկեց»<sup>1</sup>

Մեծված շինովնիկները այժմ գառան պես սկսում են գովել «սուրբ հազարսիեշեն»։ Որքան ներդաշնակ է հնչում երգիծաբանության վերջը և առաջաբանում հայտնված այն միտքը, թե երբ «աստված կտա՝ մեր ասիացիք էլ քիչ-քիչ աշքները բաց կանեն, էն ժամանակը շեն թողալ, որ ամեն հայվարա մարդ իրանց վրա բերան բաց անի»<sup>2</sup>

Ցարական շինովնիկության քննադատութիւնը մեր գրականության մեջ այսպիսով, Աբովյանից է սկսվում։ Վերջապես Աբովյանի թողած հիշատակարանները, նամակները և այլ կարգի արխիվային նյութերը ևս ապացուցում են, որ Աբովյանը դժգոհ է եղել հիասթափվել է ցարիզմից։

1836 թվին գրած մի նամակում հայտնելով, որ իր հայրենիք վերադառնալը — ինչ ինչ տհաճութիւնների պատճառ է դարձել, նա ավելացնում է. «Այսպես է Ռուսաստանում, եթե մարդ աստիճան շունի և օժտված չէ մի առանձին պաշտպանութեամբ»<sup>3</sup>։ Իսկ շին տնկնալ, դառնալ ցարիզմի գործակալ, Աբովյանը չի ուզել բնալ։

Սխալվել է Ա. Երիցյանը, անդելով թե Աբովյանը թողնելով կուսակրոնութիւնը՝ ճանաչում է եղել աշխարհական փառքերի, այն է՝ աստիճանների և շքանշանների»<sup>4</sup>։ Տարաբախտաբար մեր բաղձալսատակ աբովյանագետ Ե. Շահազիզը նույնպես այդ հարցում սխալվել է՝ միևնույն հոգվածում նախ գրել է թե Աբովյանը

<sup>1</sup> Աբովյան, Երկերի ժողովածու, 1-ին հատոր, էջ 160:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 391:

<sup>3</sup> «Իրվան Խ. Աբովյանի», 1 հ., էջ 108:

<sup>4</sup> «Երձազանք» 1894 թ., № 123:

աստիճանադարձութիւնը»<sup>1</sup> և ապա, քննելով բացարձակ հակասութեան մեջ պնդել թէ Արտվանը ստանձնել է «արքունի ծառայութիւն, որին ցանկացող եղած չէ»<sup>2</sup> Ճիշտն այն է, որ նա միայն երկար ժամանակ կարիքի մեջ անցկացնելուց հետո՝ «ստիպեալ ի կարտութենէ» մտաւ պաշտոնի՝ «թերևս ես սովից մեռնեմ, երբ ես իմ հայրանիքին զոհվելու գեղեցիկ իդեալին հետեւեմ և ոչ թէ մի այլ ճանապարհով իմ ապրուստս հայթայթեմ: Ես ինքս արդեն այս տխուր փորձառութիւնն ունեցա... Պետք է որ ես ըստ այնմ պետական ծառայութեամբ իմ ապրուստս հոգամ— ս'ըպիսի ապագա ինձ համար»<sup>3</sup>— գրում է դառնացած Արտվանը «Ա՛խ, աստիճան և նշան ես երբեք մտքովս չեմ անցկացրել»— գրում է Արտվանը մի նամակում, և եթէ, այնուամենայնիւ, նա ստիպւած է եղել խնդրել և 1843 թվին մեծ դժգոհութեամբ պատվո խորհրդականի<sup>4</sup> աստիճան ստանալ, ապա այդ միայն նրա համար, որ ինչպես ինքն է զգացել «Ռուսաստանում այդ ժամանակներն ով որ աստիճան չի ունեցել, մարդ չի համարվել, այլ կես մարդ»<sup>5</sup> Աս-

<sup>1</sup> Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտութիւնների և Արվեստի Ինստիտուտի, 1928 թ. № 3, էջ 129:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 162:

<sup>3</sup> Դիվան Խ. Արտվանի, 1 հ., էջ 109:

<sup>4</sup> Ի դեպ, մեր բազմավաստակ բանասեր Ե. Շահադիդի կողմած «Դիվան Խ. Արտվանի» գրքում, Արտվանին պատվո խորհրդականի աստիճան տալու թվականի մասին տեղ եւն զտել միմյանց հակասող տեղեկութիւններ Ե. Շահադիդը երեք տարբեր բաներ է ասում այդ հարցի մասին: Բերում ենք զբանք ըստ էջերի:

Էջ՝ 96 «Այդ աստիճանը (պատվո խորհրդականի Վ. Պ.) նրան տրվել է 1843 թվի հունվարի 2-ի հրամանով:

Էջ՝ 119. «1842 թվականի հունվարի 2-ին Կառավարիչ Մերակույտի հրամանագրով Արտվանին շնորհվել է պատվո խորհրդականի աստիճան՝ ավագութեամբ:

Էջ 146. Արտվանը «երկու անգամ պարգևատրվել է աստիճաններով առաջին անգամ 1840 թ. փետրվարի 26-ին՝ «Պատվո խորհրդականի» աստիճանով, երկրորդ անգամ 1846 թ. հունիսի 19-ին «Եկոլիեմակի աստեաթի» աստիճանով:

Սրանցից հիշտ է միայն առաջինը, որն ապացուցում է Արտվանի թողած վկայութեամբ և Կառավարիչ Սենատի 1843 թ. հունվարի 2-ի № 153 հրամանով:

<sup>5</sup> «Դիվան Խ. Արտվանի», էջ 1 հ., 96, Նույն միտքը տեսնեն 119 և 120 էջերում: Լուր ստանալով, թէ Պարբոտը Արտվանի համար աշխատում է աստիճան ձեռք բերել՝ Սո. Նազարյանը, միանգամայն համազգաց Արտվանին, գրում է. «Ռուսաստանում այդպես է, անձնական արժանիքը բանի տեղ չի զրկում» (Դիվան Խ. Արտվանի, էջ 257):

ստիճանն Արուստանին պետք է եղել իր գործունեության և ինքնապաշտպանության համար, այսինքն եղել է միջոց և ոչ երբեք նպատակ։ «Բիթլ» վասն ծառայութեան և աստիճանի տանջիցալ ցայս վայր»<sup>1</sup>, — գրում է նա 1845 թվին գրած մի նամակում։

Առնվազն սխալ է հայ գրականության պատմության մեջ հայտնված նաև այն կարծիքը, թե Արուստանը եղել է ցարիզմի հիւսկամակատար. մեծավորի ստվերի առջև ծուր դնող մի սոսկական շինովնիկ, «չափազանց դահասեր» (ցարասեր — Վ. Պ.) հիւսկանդ տիրող օրենքներին և գոյություն ունեցող կառավարության ձևին»<sup>2</sup>, որի համար էլ, որպես թե ցարական կառավարությունն «ըստ արժանվույնի գնահատում էր նրան»<sup>3</sup>։ Արուստանի գրական և մանկավարժական գործունեությունից պարզ երևում է, որ նա հիասթափվել է ցարիզմից և շարունակական կոնֆլիկտի մեջ է եղել ցարական լիսովնիկության հետ։ Հայտնի է Արուստանի բնդհարումը «Северная пчела» լրագրի խմբագիր, իրրե լրտես և Պուշկինի հալածող տխուր հռչակ հանած Զադեյ Բուլգարինի հետ, որի մասին Պուշկինը գրել է.

Не то беда что ты поляк  
Костюшко лях, Мицкевич лях!  
Пожалуй, будь и татарин,  
И тут не вижу я стыда,  
Будь жид, и это не беда,  
Беда что ты Видок фиглярин.

Այդ բնդհարման առիթը եղել է հետևյալը.

1834 թ. նոյեմբերին Արուստանը իր «բազմերախտ ուսուցիչ» Հարություն վարդապետ Ալամդարյանի «Հանկարծահա մահվան դատն խաբարն է» ստանում։ Այդ բովրդային տրամեցույց, շփոթաց իմ սիրտ, որ ևս անհանգիստ գոլով, մեկ բանի էլա չէի կարողանում ձեռք տալ։ Այն նրանով մեր աղգի շատ երիտասարդք

<sup>1</sup> «Դիվան իմ Արուստանի», I հ., էջ 61։

<sup>2</sup> Տեղեկագիր ՀՊՈՀ Գիտություն և Արվեստի Ինստիտուտի, 1928 թ. № 3, ն. Շահազիզ — Վ. Արուստան։

<sup>3</sup> Կ. Կուսիկյան, «Հանճարեղ սիրտ» («Գարուն» III դիրք, էջ 14)։

<sup>4</sup> Ալամդարյանի սպանությունը կատարվել է 1834 թվի մայիսի 14-ին Ն. Նախիջևանի Ս. Թաշվանցում «Ի հարուածոց զիշերապէն աւաղակաց» գրում է Մուր Մանրյանը Արուստանին։

կորցրին իրենց բախտը, — սրտի ցավով գրում է Աբովյանը, — նա-  
ջատին կարեր լուսավորիչ լինել: Թեև նա իմ աշակերտության ժա-  
մանակ ինձ դառն աչքով էր մտիկ տալիս և շատ վերք հասցրել  
ա, բայց և այնպես մտածելով նորա ջանք, գիտություն, ազգա-  
սիրություն, գործակատարություն, սիրտս այրվում էր և փոխի-  
վում: Վասն որո՞ւ է կարելով ես հենի տեղից դռնն նրա գերեզմա-  
նին իմ շնորհակալություն ցույց տալ ուրիշ կերպով, թարգմանեցի  
իմ քարեկամ տիրացու Մսուրից ստացած գիր գերմաներեն և ջա-  
նայի տպել ի կազեթս, որ օտարականք ևս իմանան, թե ի՞նչ ան-  
բախտություն հասել ա մեր ազգին և ո՞րպիսի արժանավոր անձն  
կորցրել ենք մենք... Գերմաներենն մեր Դորպատի կազեթումը  
դուրս էկավ: Ես ուզում էի, որ ռուսերենն էլ իմաց անվի: Էս  
պատճառով գնացի պարոն Բուլգարինի մոտ, որ նրա հետ խո-  
սեմ:

«Ազգին հասած անբախտությունը», սիրելի ուսուցչի մահը.  
հպարտ ու ինքնասեր Աբովյանին Բուլգարինի մոտ են տանում,  
թեև նա մինչև այդ էլ գիտեր Բուլգարինի մասին, որ ծնրան տե-  
սած ու ճանաչածին պես, ամենայն մարդի զահչին զնում ա: Բա-  
ղարում կամ փողոցում նրան տեսնելիս, ոչ ոք չի կարծիլ, թե նա  
գիտնական ոմն է, այլ շինական և հարբեցող: Նրա կրեսի գրու-  
թյուն և փորի հաստություն այնքան այլանդակ է, որ գրեթե կոպ-  
տություն և գինովություն նրա աչքերից թափում ա: Աբովյանն ա-  
ռաջին անգամ Բուլգարինի տանը «մեկ սահաթ քիմի» ներքևում  
սպասելով, ականատես է լինում այդտեղ կատարվող որոշ զնա-  
քերի, որից հետո այդ տունը նրա վրա անառականոցի տպավորու-  
թյուն է թողնում. «էսօր էլ իմ զգվանքս դալիս ա, ինչ ժամանակ  
մտածում եմ, ինչ որ աստ տեսա: Կարեմ ասիլ թե 7—10 աղջիկ  
մայն և դուրս եկին էս տեղից: Նրանց հրհուալ, քրքուալ, նրանց  
չիրք անամոթ խոսակցություն և վարք միանգամայն սրի պես  
կտրում էին իմ ցաված սիրտ: Մեկ ջահել տղա իմ աչքիս առաջին  
ինչ սր կամենում էր նրանց հետ էն էր անում: Իրար ուս կոծե-  
լով, ծիծաղալով, մեկ մեծ աման առաջները քաշած, ով կամենում  
էր շերեփով հանում և խմում էր կերակուր, շատ անգամ մեկ-մեկ-  
կին նրանով խփում: Էնպես էլ մեկ մեծ շուշալից իրանց դարեջու-  
րըն էին լավում... Եվ սա ինձ րափական ապացույց էր, թե պարոն  
Բուլգարին ինչ մարդ պետք է ըլի:»<sup>1</sup> Այդ օրը Աբովյանը չի կարո-

<sup>1</sup> Աբովյան, Օրագրեր, 1834—1835 թ 21 եմ նոյեմբերի միջև ի 25  
մարտի Տեօր № 14, էջ 193—200:



դանում տեսնել Բուզգարինին: Հաջորդ օրը նա նորից ստիպված է լինում տեսակցության համար Բուզգարինի տուն գնալ, որ նրան նորից երկար սպասեցնում են: Վերջապես Աբովյանը տեսակցություն է ունենում Բուզգարինի հետ, որ անմիջապես կռվի է փոխվում: Այդ մասին ևս Աբովյանը բավական մանրամասն կերպով մեզ տեղեկություններ է հաղորդում իր տակավին անտիպ օրագրերում. «12 սեպտեմբերին գնամ նորա մոտ, — գրում է Աբովյանը, — ծառային ստիպել զիս երկար սպասել. երիցս տուրքն զնա ի ներքու և նա զայ և պատասխանել, թէ՛ «Տէր իմ իսկոյն ելանէ», լեւորին անգամ առաքնւմ զնա, ասելով իմէ շունի ժամանակ, ես դարձեալց ի տուն, չեմ ես ծառայ նորա, զի անդ սպասեցից, հազիւ մտեալ ծառային ի սենեակն, լսեմ զաղաղակ կանայցի ձայնի, ետ որոյ ելանէ և պարոն Բուզգարին ի քնահանդերձս և դիմէ առ իս սառ իմն դիմօք: Ես մեղադրեմ զնա վասն այնպէս վարելոց նոցա ընդ իս, ասելով վասն է՛ր նա այնպէս երկար էր սպասել. նա մեղադրեմ զծառայ իւր, այլ ո՛չ ինչ ասեմ նմա, առ այս սրտեղեալ, ասեմ. «Ես յայն սովս միայն մնացի աստ, զի ասացից Ձեզ, թէ վարումն ձեր էր անքաղաքավարի լոյժ» և կամեմ ելանել այլ նա դիմեալ առ իս, ո՛չ տա թոյլ. «Ո՛ր կամիք, զի՛նչ պատահեցաւ Ձեզ»... Ես տրտմեալ ասեմ. նմա... թէ ես վրեժխնդիր եղեց այսմ. այլ նա ո՛չ կամի, թոյլ տալ կրկնելով չիմարաբար. թէ զի՛նչ պատահեցաւ ինձ. առ այս ասեմ թէ ես ասիացի եմ և թէ ոչ արձակէ զիս, ես ինքնին ցուցից նմա զամարդութիւն իւր. «Հանդերձ ձեր չէ հոգևորականի» ասէ. «Ա՛խ թէ եկի ցուցանել Ձեզ և կնոջ ձերում զյարգութիւն իմ, զի զայս պահանջեր յիսէն, պատասխանեալ ելանեմ»<sup>1</sup> Աբովյանը այս ղեպքը պատմում է Պարրոտին և Բարտեւսին, որոնք հորդորում են նրան հեռու մնալ «չայնպիսի տմարդի առնէ», որովհետեւ շարժել նրա հետ վիճել «նա այնպէս մարդ է, զի զոր ինքն արար, որասցի»:

Պուշկինի սպանիչ էպիգրամին արժանացած ցարական լրտեսը Աբովյանի մասին գրում է համալսարանի ուսկառոյնին «թէ ես սպանեացեալ իցեմ նմա, կամ սպանանել զնա ի ճանապարհին, — գրում է Աբովյանը, — կամ ղկին նորա, կամ այլեւ զտուն նորա». ուսկառոյն լսելով Աբովյանի բացատրությունը ասում է, որ եթե դուք ձեր սպանելիքները չեք կատարելու «տուր ինձ զխօսս պատուոյ ձերոյ և ես գրեցից նմա, զի միամտեցի»<sup>2</sup> Աբովյանը տա-

<sup>1</sup> Աբովյան, Օրագրեր, էջ 201—202:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 202:

լիս է այդ խոսքը և ազատվում իր համար ստեղծված սպառնալի պատմությունից:

Բուլգարիների հալածանքը Աբովյանը մի անգամ չէ, որ բուստիպված է եղել տանել: Իր ողջ գործունեության ընթացքում Աբովյանը հայազգի խառնաբերությունների հալածանքների հետ միասին, ստիպված էր նաև կապույտ մոնղոլափորների հարվածները կրել: 1839 թվի փետրվարի 23-ին գրած մի նամակում Աբովյանը ասում է, թե ինքը նվիրված լինելով ժողովրդի դաստիարակության գործին, զրեթե ամենուրեք հանդիպում է արգելքների: Նրան, մանավանդ, խոր վիշտ է պատճառում, որ անդրկովկասյան դպրոցների վերադարձը և իր «միակ նեցուկ» Հեսսեն Մյուլլերը գահի նկատմամբ հանցապարտ է ճանաչված և նրա պաշտոնը պետք է տրվի «հայոց ռիսիմ թշնամի» Դեմենտևին. «Սա (Դեմենտևը — Վ. Պ.) ինձ բավականաչափ վիրավորանքներ է պատճառել, որ, բնականաբար, մեր հարաբերությունների մեջ կարող էին տեղի ունենալ, — գրում է Աբովյանը, — մեր բոլոր աշակերտները նրա ձեռքի տակ պիտի տանջվեն, բայց դժխաղորապես՝ հայերը և առանձնատակ ես, ինչպես որ բոլոր նշաններից ես նկատում եմ... Արան արդեն ներկայացրել են այդ տեղի համար, որեմն ես կորած եմ: Ես բնավ չեմ կարող սրա խճճանքը տանել: Կարողություն ես չունիմ, աստիճան՝ նույնպես»<sup>1</sup>

Աբովյանը ստիպված մտածում է — իրեն համար «Պետերբուրգում մի անկյուն գտնել», որ կարողանա իր օրական «հացը հայթաթել»: Նույն թվի հոկտեմբերի 9-ին Ֆրենին գրած նամակում Աբովյանը նորից ստիպված էր խոսել ցարական շինովնիկից իրեն սպառնացող վտանգի մասին. «Իմ նախորդ նամակի մեջ մի քանի դժգոհություններ էի հայտնել Հեսսեն Մյուլլերի հաջորդ մեր վերադարձի մասին, որ այժմ հեռացված է պաշտոնից: Այս հանգամանքը այժմ նրա ականջն է հասել, թե ինչպես, չեմ կարող բացատրել: Նա այժմ սաստիկ դառնացած է իմ դեմ: Նրան պատմել են, թե ես Ձեզանից խնդրել եմ, որ նրա մասին խոսեք նախարարի հետ: Խնդրում եմ նամակը բոլորովին անհետք ոչնչացնեք: Մինչև որ ինձ օգնության հասնի, այս հեռավորության մեջ շատ շարագուշակ բաներ կարող են պատահել: Անշուշտ, ես անհիմն չեի գրել: Վերջերս ինձ հետ շատ լավ էր: Այժմ թեպետ պաշտոնական, սակայն կարող է վնասել»<sup>2</sup>

<sup>1</sup> Գիվան Խ. Աբովյանի, 1 հ., էջ 113:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 117:

Վերջապես հայտնի փաստ է արդեն, որ Երևանի գավառապետ Բլավատսկու մեքենայութիւնների պատճառով էր, որ փոխարքան հրամայեց երեք օրյա կալանքի ենթարկել Արովյանին, որպէս թէ Ներսէս Աշտարակեցուն Երևանում դիմաժողովու ժամանակ իրեն յաժ չպահելու համար: Վերաժողոված Արովյանը 1840 թվի հուլիսի 18-ին Անդրկովկասի դպրոցների վերատեսչին այդ մասին հետ-վայն է գրել. «Ձերոք բարեծննդութեան տարվոյս հունիսի 22-ի նո. 738 առաջագրութեան հետևանքով ես նորին պալատափայլութեան Կովկասի կառավարչապետի կամքով կրեցի երեք օրվա կալանքիս պատիժը, բայց և այնպէս ես ինքս ինձ մեղավոր չեմ ճանաչում. ես ջուլց չեմ տվել ոչ մի տգեղ վարժունք Ներսէս կաթողիկոսի Երևան մուտք գործելու ժամանակ:

Դրա պատճառն այն անախորժ դէպքն է, որ տեղի է ունեցել իմ և տեղիս գավառապետի միջև, մանավանդ անցյալ տարվա հանդիսավոր ախտի ժամանակ<sup>1</sup> երկար ժամանակ մեզ հայտնի չէր այդ «անախորժ դէպքի» մասին որեւէ բան: Վերջերս Վրաստանի Կենտրոնական Պետական արխիվում գտնվեց մի փաստաթուղթ, որ թվագրված է 1846 թ. 13 մայիսի և կոչվում է՝ „Дело канцелярии наместника кавказского по письму эриванского уездного начальника об обиде причиненной ему исправляющим должность смотрителя Эриванского уездного училища, титулярным советником Абовяном при встрече патриарха Нерсеса“. Պարզվում է, որ ըստ ցարական նենդ ու բանասերու շնորհիկի, Արովյանի «աններելի» հանցանքն այն է, որ նա Ներսէսին դիմաժողովու ժամանակ քաղաքացիական հագուստով է եղել և ոչ համազգեստով: Այդ առթիվ Բլավատսկու արած դիտո-դութեանը հապարտ ու ազնվամիտ Արովյանը, Բլավատսկու որակու-մով «հանդուգն» պատասխան է տվել. Կովկասի փոխարքային այդ մասին Բլավատսկու գրած գրութեան խիստ տենդենցիոզ տոնը կասկած չի թողնում, որ դա ոչ թէ պատահական միջադեպ է, այլ նախաձեռնած չալածանք Արովյանի նկատմամբ: Հիշեցնելով նաև այն հանգամանքը, որ ինքը հանդիսանում է դպրոցի պատ-վավոր վերատեսուչը, իսկ Արովյանը նրա ստորադրյալը, Բլավատ-սկին մատնանշում է Արովյանին Երևանից հեռացնելու անհրաժեշ-տութեան վրա. «այդ աստիճանավորի այդ ծայրահեղ արարքը, — գրում է Բլավատսկին, — մյուսների համար՝ ծառայութեան մեջ

<sup>1</sup> «Դիվան Խ. Արովյանի», I հ., էջ 175:



ազգաներին չհարգելու վատ օրինակ կարող է ծառայել, դրա համար էլ ես չպետք է մնա Երևանում»<sup>1</sup>

Արտվյանի մանկավարժական գործունեությունը ևս խափանվում էր հենց ցարիզմի, ցարական լիեովնիկների կողմից:

1847 թ. ապրիլի 25-ին Երևանի գավառի դատավոր Օրլովսկուն գրած թղթում Արտվյանը նկատում է, որ իբր ղեկավարած դպրոցում ուսման անբարեհաջող ընթացքի «զլխավոր» պատճառներից մեկն էլ «տեղական իշխանության աջակցության և ուշադրության պակասությունն է»: Իբրև տեղական իշխանության «անբաղաժար» ուշադրության անհամար օրինակներից մեկը, նշենք 1846 թ. գավառական դպրոցի վերանորոգման համար թափած Արտվյանի նուանդուն ջանքերը, որոնք կառավարության առաջ Արտվյանին ներկայացրին աննպաստ կողմից: Կովկասյան դպրոցների վարչության պետ գեներալ-մայոր Անդրեյ Շրամմ 2-րդը այդ առթիվ Արտվյանին գրում է. «Ձերդ բարեծնությունը, որոշ նկատառումներով, մոռանալով Ձեզ հանձնված ուսումնարանի և պետության շահը, իշխանության առաջ Ձեզ ներկայացրիք խիստ աննպաստ կողմից, համոզելով նրան, որ դուք չունեք հաստիքավոր վերատեսչի Ձեր պաշտոնին համապատասխան հատկություններ»: Ապա Շրամմի օպատնալիքն ավելի կոնկրետ է դառնում՝ թե Արտվյանի բռնած ընթացքը կարող է նրան զրկել նաև պաշտոնից: Գումարենք այդ բոլորին այն խիստ վախը, որ տարիներ շարունակ զգացել է Արտվյանը ցարիզմից և շատ անգամ մտածել այդ «գառըն աշխարհից» դուրս մահու տալու գնով ազատվել, պարզ կրդառնա հարցի էությունը:

«Թուրքի աղլիկը» պատմվածքում Արտվյանն այդ մասին գրում է. «Ո՞ր լսում էի՝ թե մեկ մարդի պատիժ տվին, յա բանդը բցեցին, որ ստում էին՝ թե Ռուսաստանիցը մեծ մարդ ա էկել, որ մեր երկրի ահվալն քննի իմանա, որ կուռակալիցը յա նախարարիցը (մինիստրիցը) մեկ թուղթ էր գալիս, որ կառավարությունիցը (դիրեկցիցը) ստորոժը գիրքը կոնատակին աշքիս չէ՛ր երևում, էնպես էի սարսափում, կարծում, թե էս ա, իմ վերջին օրը հասել, մոտացել ա, իմ արած շարուքիւնը լիս ընկել, Պետերբուրգը, Մոսկով, Քիֆլիզ ինձանից դանգատով լցվել են, իմ բարեկամքը ինձանից ձեռք վերցրել, իմ թշնամիքը ինձ մատնել, ինձ պետք է՝ տանեն սաղ սաղ թաղեն, յա կախ տան»<sup>2</sup> Մի՞թե ցարիզմի բազմա-

<sup>1</sup> «Коммунист», от 31 марта, 1948 г.

<sup>2</sup> Արտվյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 245:



քահանութեան երկրպագութիւն (ինչպէս երբեմն պնդել են Արուսեանի մասին) ծանոթ կլինեն հոգեկան այս անպատասխանը: Որ մեր մեծ յուսարկողն ու հայրենաստերը իր հայրենիքում, ամբողջ կյանքի ընթացքում ցարական «ստորոժից» իսկ սարսափել է, երևում է նաև նրա անհայտացումից քիչ առաջ, 1847 թվի հոկտեմբերի 19-ին, իր աշակերտ Գևորգ Գեղամյանին գրած նամակից: Այս նամակում սոսկահար Արուսեանը գրում է. «Կարծում էի ամեն ահաթ թե Սիբիրն է իմ վերջը: Սիբիրը մարդ աշքի առաջին ունենալիս՝ էլ սե՛ր կդա մտքիցը, ես սիրելի, ես որդի՞»: Ապա Արուսեանը զգուշացնում է իր սանին. «Համբերութիւնով և ծածուկ կարգա ու կամ ճղիր, կամ Շաֆու ձեռուն էլ եղ ղրկիր, որ ուրիշի ձեռ չի ընկնի»:<sup>1</sup>

\* \* \*

Այն Արուսեանը վախենում էր ցարիզմից և կոնֆլիկտի մեջ մտնում Բուդգարինների հետ, ապա միանգամայն այլ էր նրա վերաբերմունքը ուսման մեծ ժողովրդի ու նրա հարուստ կուլտուրայի նկատմամբ:

Արուսեանը զգացել է երկու Ռուսաստան (Հայաստանը Ռուսաստանին միակցվելուց հետո, մանավանդ կյանքի վերջին շրջանում): Նա հիասթափվել ու զգգոհել է ցարիզմից և, ընդհակառակը, առանձին սիրով կապվել ուսման ժողովրդի հետ, որ նրան տվել է արնքան սիրելի լուսնոտութներ և Կոիւովներ: Արուսեանը Հայաստանի համար միակ ձեռք, հայ ժողովրդի բախտը ուսման ժողովրդի հետ կապելու մեջ էր տեսնում՝ նշելով երկու ժողովուրդների միջև մշտական անխզելի կապի և սիրո անհրաժեշտութիւնը: «Վերք»-ի համկելած «Ջանգի»-ի ձեռագրում՝ անձնավորելով Ջանգին, Արաքսը և Վուգան, Արուսեանը գրում է. «Բացէ՛ք զձախատ ձեռ, ցնծացն՛ք բամայր, իմ քաղցր Վուգայ քոյր հոգայ միշտ զձեր ճար: Ես զի՛մ մտերմութիւն ցուցից նմա համակ, նա զիւր քաղցրութիւն տացէ՛ ձեզ՝ ո՛րդեակը: Այս կապ անխզուն, այս սէր սրբազան մնացէ ի մէջ մեր ի կեանս հավիտեան»:<sup>2</sup>

Միանգամայն իրավացի կերպով Ռուսաստանը «Վերք» համարել է հայ ժողովրդի ազգային զգացմունքների համաստիք՝ «հայ ժողովրդի վերքի մեծուղի հետ միասին մի հզոր ջատագովութիւն ու օրհնեղ ուսման ազգին ու իր ուժին»:<sup>3</sup> «Նվ» «Վերք Հայաստանի»-ի

<sup>1</sup> Գրական Քննդարան, Արուսեանի արխիվ գործ № 252,

<sup>2</sup> Նույն տեղ, գործ № 4, ընդգծումը մերն է Վ. Գ.

<sup>3</sup> «Ամսկետական Գրականութիւն», 1941 թ. № 12, էջ 70:

մեծ դադարներն էլ ոչ է, ոչ թե էն, որ նա գրված է աշխարհաբար<sup>1</sup>, — ավարտում է Թումանյանն իր միտքը:

Հարազատ կենդանի վերարտադրելով ժողովրդի վերաբերմունքը, Աբովյանը բացասաբար է արտահայտվել հմրոպական խոշոր պետությունների նվաճողական քաղաքականության մասին: Երկար ժամանակ օգնություն աղերսելով Արևմուտքի «մարդասեր» պետություններից հայ ժողովուրդը համոզվել էր իր հույսերի ապարդյուն լինելու մեջ: Քարոզելով թե «սեր, խաղաղություն պահեն դամենայն դադար և դադինս ի բարօրութեան» Աբովյանը միաժամանակ ցույց էր տալիս «կրթված» հմրոպացիների խելակալ դեմքը: Դրանք «գովում են» «ոսկու թոզը» տեսնելիս և չեն ամառում «ենդր ազգերին (այսինքն սեպգերին) բռնիլ, ծախիլ ինչպիս անասունը, որ մարդ լսելիս, միտը հալում ա վրեն... Մարդի սիրտ կրակ է ընկնում, ինչ ժամանակ լսում ա, թե էս լուսավոր հմրոպացիքը ի՞նչ են բերել էն խեղճ ազգի (նեգրերի — Վ. Պ.) գլխին, որդին հորիցը խել, աղջիկը մորիցը, մորը՝ զավակներիցը, որ տանին իրանց փողի ծաքավը կշտացնեն: էս էլ քո լուսավոր հմրոպացին»<sup>2</sup> — ծաղրով ու դառնությամբ բացականչում է Աբովյանը՝ արձագանքելով ուս առաջավոր մտածողների նմանօրինակ ելույթներին:

Մերկացնելով ազատարարի պողպատով հանդես եկող հմրոպացի գաղութարարներին, Աբովյանը հիացմունքով է խոսել «սուր բաշ սրտի մեծագործության և տղամարդության»<sup>3</sup> ուս ժողովրդի ազատասեր ոգու և հերոսական պատմության մասին: Տակավի՛ն անտիպ «Ալեքսանդր կայսրը Փարիզում և Նապոլեոնի անկումը»<sup>4</sup> հորվածում Աբովյանը Նապոլեոնին համարում է «հանդուգն բրոնավոր» և մերկացնում Ռուսաստանի դեմ նրա մղած պատերազմի նվաճողական էությունը: «Եվրոպական ազգերի խավարագուճող դորքերով» հարձակվելով Ռուսաստանի վրա և «զազանություններ անելով Մոսկվայում» Նապոլեոնը ցույց էր տալիս, որ ձգտում է իրեն ենթարկել ամբողջ աշխարհը: Նա ոչ միայն մտածում էր ստրկացնել ժողովուրդներին, — գրում է Աբովյանը, — այլև արմատախիլ անել

<sup>1</sup> «Մովսական Դրականություն», 1941 թ., № 9—10, էջ 114:

<sup>2</sup> Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 2-րդ, էջ 303—306, ընդգծումը հեղինակինն է:

<sup>3</sup> Նույն տեղ, հատոր 1-ին, էջ 205:

<sup>4</sup> Աբովյանի արխիվ, № 37, մեջբերումներն անում ենք աշխարհաբար թարգմանությունից:

ներանց, որոնք օտարին ծառայելու համար չեն ծնված: Նապոլեոնին Արտվյանը անվանում է խաղաղության դաշինքի խախտող, աշխարհի անհաշտ թշնամի, մարդկային օրենքները արհամարհող մի բռնակալ, որ ուզում է «ստրկության շղթաների մեջ առնել, իրեն ենթարկել տիեզերքը և կառավարել այն միապետական սրով»:

Ռուսաստանը նվաճելու, ուրեմն և «կորստյան մատնելու» Նապոլեոնի պլանը Արտվյանը «եղեռնագործություն» է համարել: Հայրենական պատերազմի դուրս եկած ռուս զորքի ու ժողովրդի հարվածների տակ պարտվում են Նապոլեոնի անպարտելի համարված բանակները «Նապոլեոն մեծի հոգու բոլոր ձիթքերն անհետացան և նրա փառքը թեթևացած ստվերի պես հյուսիսային հողմից քշվեց: Նրա ավագ զորապետը զարմանալով բացականչում է. մի՞թե սա այն մեծ զորավարն է, որից զոգում էր Եվրոպան»:

Արտվյանը հարստություններ, սքանչացումով է խոսում ռուս հզոր ու ազատաբաղձ ժողովրդի մասին: Նշելով մի քանի ճակատամարտեր, որտեղ ռուսները իրենց փառքով են պսակել, Արտվյանը գրում է. «ռուսները քանի քանի տեսակ անխելի և անտեսանելի արիություններ և քաջություններ ճակատամարտելով մեծամեծ օրինակ ծառայեցին աշխարհին... որով պանծալի դարձրին իրենց ամբողջ Եվրոպայի կամ, ավելի լավ կլինի ասել, ամբողջ աշխարհի առաջ: Հետագա սերունդները անհավատալի հիացմունքով կարգացին մեր ժամանակակից տարեգրությունը, որ անհամեմատելի է նախկին ժամանակների հետ»:

Ռուս ժողովրդի մասին նույնպիսի հիացմունքով ու սիրով է խոսում Արտվյանը նաև իր այլ գործերում: Գովելով «հին ու նախադահ մայրաքաղաք Մոսկովը», որը իրեն «զոհ մատուցեցաւ բոցոյ», Արտվյանը գրում է. «Թովանդակ Ռուսաստան ձգեաց յայսմ վայրի զսուսերն վերժխնդրութեան: Մերք, տղայք և կանայք սպանանին զթշնամիսս»<sup>1</sup> «Ֆեոդորա կամ որդիական սեր» դրամատում ևս (1841 թ.) Արտվյանը նշում է, որ «Ռուսք ֆրանցուզին ջարդեցին»<sup>2</sup>:

Արտվյանը բարձր է գնահատել ռուս ժողովրդի զորաւարների, մասնավորաբար հանճարեղ Մ. Ի. Կուտուզովի դերը՝ «ռուսաց զորքի բնտիր հրամանատար Միքայել Սմոլենսացին (Կուտուզովը—

<sup>1</sup> «Նոր տեսական և գործնական բերականություն» (անտիպ), Թերթ 249

<sup>2</sup> Արտվյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 342:



վ. Պ.) Հոռմի կամեյլոսի նման անհնարին հարվածներ հասցրեց թշնամիների զորախմբին: Եվ երբեմն իրենց լուսավորությամբ գո-  
նողացող այն բարբարոսների ոսկրներն ու զենքերը դաշտի փոշու  
հետ խառնելով ցույց էր տալիս նրանց խայտառակությունն ու ան-  
պատիվ լինելը»<sup>1</sup>

Բարձր ոգևորությամբ խոսելով ռուս ժողովրդի, նրա հերո-  
սական պատմության մասին, Արովյանը, սակայն, հանգես է բե-  
րել ողջախոհ մտածելով, քննադատել ու մերկացրել է նաև ռուսա-  
կան իրականության մեջ զոչություն ունեցող խոցերն ու թերու-  
թյունները: Մի կողմ թողնելով ցարական շինովնիկության մերկա-  
ցումը, (որի մասին խոսել ենք արդեն), Արովյանը նկատել ու  
բացատրար է արտահայտվել ճորտատիրության մասին, ճիշտ է,  
ու արմատական դիրքերից, բայց հանուն մարզասիրության պաշտ-  
պանելով ճորտերին. «Միթե ճորտը հայլանից վատ է,— գրում է  
Արովյանը «Պատմության Տիգրանի» վեպում,— նա էլ էնպես մարդ  
ա, ինչպես ես: Ինչ անի ինքը, որ ճորտ ա ծնվել: Նրա հերը որ  
ազնիվ (ազնվական— վ. Պ.) ըլեր ու իմը ճորտ, կարելի է ես ըլիի  
նրա ուհաթը»<sup>2</sup>

Կապվելով Ռուսաստանին, հայ ժողովուրդը կապվում էր նաև  
ռուս ժողովրդի հետ, հազորդակից էր դառնում ռուս առաջավոր ու  
հարուստ կուլտուրային, գիտությանը, գրականությանը: «Կուլտու-  
րայի ռուս վարպետները,— գրում է „Правда“-ն,— հակառակ ցա-  
րական կառավարության դադությանցնող քաղաքականության, միշտ  
բարերար ազդեցություն են գործել Ռուսաստանում բնակվող մյուս  
ազդեցությունների կուլտուրայի վրա»<sup>3</sup>

Անհերքելի է ռուս կուլտուրայի բարերար ազդեցությունը նաև  
հայ գրականության վրա. Արովյանն առաջին մեծ զեմքն է հայ նոր  
գրականության մեջ, որ բարձր է գնահատել ռուս կուլտուրան և  
կրել է այդ կուլտուրայի բարերար ազդեցությունը: Սխալ է և  
տրագիցիոն, երբ հայ գրականության պատմության մեջ Արովյա-  
նին աշխատում են կապել միայն եվրոպական կուլտուրայի հետ,  
նկատի ունենալով այն հանգամանքը, որ նա իր կրթությունն ստա-  
ցել է նաև Դորպատում: Սխալ այդ տեսակետը առաջին անգամ  
արտահայտել է Ստ. Նազարյանը, պնդելով թե Արովյանը ապրե-

<sup>1</sup> Արովյանի արխիվ, գործ № 37:

<sup>2</sup> Արովյան. Ծրկերի ժողովածու. հատոր 2-րդ, էջ 278:

<sup>3</sup> „Правда“, от 7 января, 1937 г.



յով և կրթվելով Դորպատում այդտեղ «վերստին ծնվել է», գտել իր հոգու համար ճնոր իմացական ավագանը<sup>1</sup>։

Աբովյանը, — մեր կարծիքով, — իր հոգևոր առաջին մկրտությանը ստացել է Թիֆլիսում, ներսիսյան դպրոցում սովորելիս, որտեղ նա կրել է դպրոցի տեսուչ, ուսանական օրինադրության շնորհ պաշտպան Հ. Ալամդարյանի ազդեցությունը։ Առաջին անգամ ուսուցչականության հետ Աբովյանը ծանոթացել է Ալամդարյանի միջոցով։ Դորպատում ևս, ինչպես և մինչև իր ողբերգական անհայտացումը, Աբովյանը շարունակել է իրեն կապված դպալ ուսուցչական ու կուլտուրային։ Իր դրական մանկավարժական բազմադրյուն գործունեության ընթացքում նա լիցք է ստացել ուսանական կուլտուրայից, գերազանցապես այդ կուլտուրայի հետ է կապված նա նաև իր դեմոկրատական լուսավորական հայացքներով։ Զերմորեն սիրելով ուսուցչական ժողովրդին, Աբովյանը, հայ նոր գրականության պատմության մեջ առաջին անգամ, ուսանական կյանքից վերցրած թեմայով դրամա է գրել («Ճեղքորա կամ որդիական սեր»), ստեղծելով ուսուցչական դրական կերպարներ։ Աբովյանի վրա ուժեղ ազդեցություն է թողել ուսուցչական ժողովրդի սիրելի քաղաք Պետերբուրգը, վերջինս նա նկարագրել է առանձին սքանչացումով. «... Աստ քաղաքը պայծառաշենք, անդ լեռինք և անտառք չքունադք, այլուրեք գիւղօրայք և դաշտօրայք զուարճալիք, ամենայն անսովոր, վասն որոյ նորահայելի վասն աշաց և սրտի մերոյ և ի վախճանի Պետերբուրգ այս ահագին քաղաք հրաշակերտ, որ յառաջին անդ հայելն յարկշտակն զտեսնողն, որ զամենայն հանդերձս և լեզուս բոլոր աշխարհաց երկրագնդի մերոյ կարելի է տեսանել և լսել, ուր ամենայն փողոց, ամենայն արձան, ամենայն տուն երևին զամբողջ զուրեղս մարդկան վատենալ առ ի հանճարել զայսքան բիրտտեսակ հրաշագործութիւնս»<sup>2</sup>։ Աբովյանը նաև բանաստեղծություն է նվիրել Պետերկայանին (Պետերբուրգին)։ Պետերբուրգում է դարձյալ, որ Աբովյանն իր ընկերոջ հետ առաջին անգամ ուսանական թատրոն է գնացել, որը նրա վրա ուժեղ և անմոռանալի տպավորություն է թողել։

Դորպատում պրոֆեսոր Բլումենի տանը ծանոթանալով ուսանչանավոր բանաստեղծ Ժուկովսկու հետ, Աբովյանը անջնջելի տպավորություն է ստացել և նկարագրել այդ հանդիպումը իր Դորպատյան օրագրերում։ Բերում ենք օրագրի այդ հատվածը

<sup>1</sup> Նյուսիսափայք, 1858 թ., № 2, էջ 145։

<sup>2</sup> Աբովյանի արձիվ, գործ № 57։

համառոտած ձևով. «Այսօր հրավիրել զիս պրոֆեսոր Բլումենն ի սեղան. յառաջին ժամուն դնացնալ առ նա, գտանեմ զետրեկ կանդիտատն Իվանով, զայրն բարեմիտ»: Արովյանը Իվանովի հետ սկսում է «զրուցաւորել զգրականութենէ ռուսաց... Սեղանն մեր մերձ էր ուսարտի յանկարծ անակնկալ բանայ որ զդուռն տան նորա. այր մի վայելչադէմ, առոյգանձն, լայնակութ, լայնաթիկն, բացաճակատ, ամբաստեալ, քաղցրակն, ի սեաւ սերտութս մտանէ ի ներքս: Պարոն ելանէ իսկոյն և յասելն նորա ցլին իւր՝ «Ահա պարոն ժուլովսկին», երակք շարժեցան խնդութենէ տեսանել զայրն անուանի, զնախազուխն գրականութեան ռուսաց... Նա կարի վայելչութեամբ բարեւ զմեզ զամենեանն... Յետ սակաւ պատմելոյ զճանապարհորդութեան իւրմէ, զոր նա միանգամայն պարզ, սոսկ բանիւ պատմեր, ցուցանէ պրոֆեսոր Բլումենն զԻվանով և զիս. առ Իվանովն դարձնալ հարցանէ գերկրորդ լինելիութեան նորա առտ, զինէն, «Հայկազն որ յԱրարատեայ» առ պրոֆեսոր Բարտեւս, ի յառաջարկելն, նա համեստութեամբ զուլս տուեալ ինձ. «Եւ ես բերեմ ձեզ ի Մամբլանէ ողջոյն» ասն. վայելեալ նորա զվայելչութիւն առ համան Իտալիոյ, հոգի նորա բանաստեղծական և հայրենասիրութեան ո՛չ կամեին ստորացուցանել և զարտօնութիւն կողմանցն հիւսիսոյ, որում թէև բազում հակառակ էին պրոֆեսոր Բարտեւս և կին իւր, այլ նա ամենայնի կամէր հաստատել թէ «խրճիթ մի բնակեալ ի մանկութենէ, քաղցր է ումէք, քան զհրաշալի կողմանս Իտալիոյ», ի տարակուսելն նորա ի զրոյցս գերմաներէն, նա գաղղիներէն խօսէր, նա արդէն իսկ առեալ էր զշափ հասակի իւրոյ, այլ տակաւին զուարթ, ի բանս իւր հանդարտ, համեստ, և յամենայնի անպաճօճ, ի շարժմունս քաղաքավար, ծանրաշարժ, բայց առանց իրիք սիգացման, ժպիտ մի քաղցր առաջնորդէր միշտ պատասխանիս նորա:

Ելանելն մեր ի սեղանոյ, դառնայ առ իս Իվանով. «Ահա նախազուլս գրականութեան մերոյս... Ո՛ր արին, ո՛ր խնդութիւն նապրչանձն նորա, ցուցաներ բոլոր շարժմունք նորա, որպիսի՞ ազգասիրութիւն: Նա նկատեալ զպատկերս ի տան պրոֆեսորի, հայի ի նոսա և ժամս երկայնս խօսի ի վերայ ճարտարութեանց, արհեստից և այլն: Ի կամելն նորա ելանել, նովին քաղցրութեամբ բարեւ զամենեանան: Պրոֆեսոր Բարտեւս և մեր ամենեքեան խնդայաք ի վերայ այսպիսի անտեղեկալ տեսութեան նորաս<sup>1</sup>

Այս մեջբերումից պարզվում է նախ՝ որ Արովյանը Դորպատ-

<sup>1</sup> Օրագրեր. «Սեպտ. 3. երկուշաբթի 1833», Տետր XI, էջ 133—134.

տում ևս հետաքրքրվել է ուսա գրականությամբ, գրույցներ ունեցել այդ գրականության շուրջ և երկրորդ՝ որ նա, ի դեմս Փոփովսկու, իր հիացմունքն է արտահայտել ուսա մեծ ու հարուստ գրականության նկատմամբ:

Մի այլ առիթով՝ նույնպես Աբովյանը խոսել է Փոփովսկու մասին, զրվատելով նրա «չքնադատում» բանաստեղծությունները<sup>1</sup>:

Հետաքրքրական է, որ հետագայում Փոփովսկու «տաղերի գրավիչ քաղցրության» մասին է խոսել ուսա մեծ քննադատ Դոբրոլյուբովը<sup>2</sup>:

Վերջին տարիները հայտնի դարձավ, որ Աբովյանը իր ընկեր՝ 1831 թվից Պետերբուրգի կադետական կորպուսի ուսանող Սողոմոն Ավթանդիլյանցից խնդրել է ունեցել իրեն (Ավթանդիլյանցին) նամակներ գրել Իվան Իվանիչ Պանսևի հասցեով:

Հայաստանի Գրական Թանգարանում են գտնվում Ավթանդիլյանի՝ Աբովյանին գրած հինգ նամակները, որոնցից վերջին երկուսը Պետերբուրգից: Վերջին նամակը թվագրված է «1833 թվի ապրիլի 5» Այդ նամակում Ավթանդիլյանը հայտնում է Աբովյանին, որ կորպուսում վաշտի հրամանատարներին կարգադրված է կարգալ կադետներին գրված նամակները, ուստի «Покорнейше прошу тебя не писать ко мне прямо в Корпусе, а напишите здесь знакомому моему и он отдаст непременно мне. Когда будете писать ко мне, то прошу покорнейше писать так: Его Благородію Милоставому Государю Ивану Ивановичу Панаеву»<sup>3</sup>. (այսպիսով է Պանսևի հասցեն)<sup>4</sup>:

Այս փաստը հետաքրքրական է այն տեսակետից, որ կողմնակի աղբյուր է հանդիսանում Աբովյանի՝ ուսա գրական գործիչների հետ ունեցած կապերը ուսումնասիրելու համար: Հայտնի է, որ Աբովյանը 1830—1836 թվերին մի քանի անգամ եղել է Պետերբուրգում, անհավանական չէ, որ այդտեղ նա իր ընկեր Ավթանդիլյանի մոտ կամ նրա միջոցով հանդիպած և ծանոթացած լինի Պանսևի հետ<sup>5</sup> Սակայն այսօրին միայն ենթադրություն:

<sup>1</sup> Նոր տեսական և գործն. քննականություն, Թերթ 264. (անալի):

<sup>2</sup> Добролюбов, Сочинения, том I, стр. 210.

<sup>3</sup> Աբովյանի արխիվ, գործ № 245:

<sup>4</sup> Մենք կարծում ենք սխալվել է «Աբովյանը և ուսա կուլուստրան» հոդվածի հեղինակ Ա. Դուրբանյանը, պնդելով, թե Վերկու մասիկ ընկերների (Աբովյանի և Ավթանդիլյանի Վ. Պ.) միջև նամակագրական նոր կապը լինում է երիտասարդ Իվան Պանսևը («Современник» հայտնի ժառանգի խմբագիրը՝ բանաստեղծ Նեկրասովի հետ միասին): («Պորճրդային գրականություն», 1940 թ. № 3, էջ 167): Այս կատեգորիկ պնդումը անհիմն է, որովհետև



Արտվյանը ոչ միայն մտն է նշել ուսն կուլտուրային, այլև նշել է ուսնայ լեզվի և գրականության առաջին մեծ պրոպագանդիստը հայ իրականության մեջ: Նրան հրապուրել են ուսն հեղինակները՝ Լոմոնոսովը, Ժուկովսկին, Կարամզինը, Կոխովը և այլք: Արտվյանին է պատկանում Կարամզինի «Կղզին Բորնո-հովմ»<sup>1</sup> և «Միսիս» բանաստեղծությունների գեղեցիկ թարգմանությունները: Հայտնի է նաև, որ «Պարսպ վախտի խաղալիք» ժողովածուի առակների մի մասը թարգմանություններ կամ փոխադրություններ են Խեմնիցերից, Դմիտրիևից և մանավանդ Կոխովից:<sup>2</sup>

Վերջինիս նկատմամբ մանավանդ Արտվյանը ջերմ սեր է տածել, նրան համարելով «անմահ առակախոս» և իր աշխատավար-

ձեթն նույնիսկ ընդունեք, որ խոսքը իսկապես «Современник»-ի ապագա խմբագիր Պանտևի մասին է, էլի դա իրավունք չի տա պնդել, թե Ավթանդիլյանի և Արտվյանի նամակագրական կապը եղել է «Современник»-ի խմբագրի միջոցով: Այդ ժամանակ Պանտևը 21 տարեկան զբաղ էր և միայն 14 տարի հետո դարձավ «Современник»-ի խմբագիր: Իսկ այդ (1833 թվի) նամակից բացի ուրիշ ոչ մի վավերական չկա, որ ապացուցեր, թե 1833 թվից հետո ևս (մանավանդ 1847 թվից հետո, երբ Պանտևը դարձավ «Современник»-ի խմբագիրը) շարունակվել է Արտվյանի և Ավթանդիլյանի նամակագրությունը:

<sup>1</sup> Այս բանաստեղծությունը Կարամզինի գործերում կրում է, «Законы осуждают» վերնագիրը: Գրված է 1792 կամ 93 թվին: 1794 թ. ապրիլի «Остров Борнгольм» պատմվածքում Կարամզինը պատմում է երիտասարդ սիրահարի տառապանքների մասին (որին հանդիպել է Գերմանիայում ճանապարհորդելիս), որը (սիրահարը) երգում է այս երգը:

<sup>2</sup> «Արտվյանը և ուսն կուլտուրան» հոդվածի հեղինակ ընկ. Ա. Ղուրբանյանը Արտվյանի ուսն հեղինակներից կատարած թարգմանությունների մասին գրում է. «Արտվյանի առանձին թղթերի մեջ պատահում են ուսնական պոեզիայից կատարված թարգմանություններ և արատադրություններ: Այսպես, որինակ, Արտվյանի արխիվում մենք գտանք Կոբենիների «На смерть сына» ընդարձակ բանաստեղծությունն արտագրած, որ հավանաբար դուր է եկել Նրան, ինչպես նաև «Прощаюсь ангель мой» խոսքերով սկսվող ստանավորը գրված իր գերմաներեն գրություններից մեկի հետևը, իսկ Վոյնյկովի «Плач русского» ստանավորի հենց լուսանցքում այդ գրվածքից թարգմանված է Արտվյանի ձեռքով 12 տող և անավարտ թողնված: Մեզ թվում է, թե ընկ. Ղուրբանյանը բարի ցանկություն ունենալով հանգերձ շատ է շտապել այդպիսի եզրակացություններ հանելիս: Նախ, ոչ մի փաստ չկա, որ ապացուցեր թե իսկապես «На смерть сына» և «Плач русского» բանաստեղծությունները Արտվյանին է արտագրել և մանավանդ թե նա ցանկացել է դրանք թարգմանել: Մեզ թվում է թե այդ երկու թղթերը որևէ անգղալուստ պատճառով պատահաբար խառնվել են Արտվյանի թղթերին հետադադրում: Մենք այս կարծիքի վրա պնդում ենք, հիմք ունենալով և այն, որ այդ բանաստեղծությունների ձեռագրերը ոչ մի նմանություն չունեն Արտվյանի ձեռագրերին:



էից հաստուկ գումար հատկացնելով նրա հուշարձանի կառուցման ֆոնդին:

«Նոր տեսական և գործնական քերականության» մեջ Աբովյանը քերականական վարժություններ է տալիս ըստ Դմիտրիևի «Աղավնեակ», Գերժավինի «Ճշմարիտ երջանկություն», Լոմոնոսովի «Տաղերգություն ըստ Յովբայ» բանաստեղծությունների, թե Աբովյանը որ առաինձան հարադատ է զգացել ռուս գրականությանը իրեն, ցույց է տալիս նաև «Կարեմ սրտիս կակիժը լեզվով քեզ պատմել» բանաստեղծության «Տաղ ի գոյն» «He шёл мне Матвейка» ծանոթությունը: Արտին մոտ զգալով ռուսական երեկալի ժամանակ տարածված երգը, Աբովյանը այդ երգի եղանակով բանաստեղծություն է գրել:

«Նոր տեսական և գործնական քերականության» մեջ բազմաթիվ առիթներով խոսելով ռուսական իրականության մասին և օրինակներ բերելով ռուսական կյանքից ու պատմությունից, Աբովյանը հատկապես նշում է Գիտությունների Ակադեմիայի գերը ռուս լեզվի զարգացման գործում. «Ակադեմիայն (ճեմարանը) ռուսաց, — գրում է նա, — հիմնեալ ի 1788 ի 21 հոկտ. սկսավ նոր դար յառաջածել վասն լեզուի և գրականութեան ռուսաց: Ի 1802 ամին ընծայեալ նոր ի լոյս դնոր քերականութիւն առավել ևս պայծառացոյց զլեզուն: Երեւելի քերականք այժմեան ժամանակի ևս պարոն Սովորովն, Նիկոլսկի, Բօրն, Գրեշ, Վաստոկով, Ֆատեր»<sup>1</sup> Հակառակ արեմուտքի առջև խոնարհվելու արատաւոր տենդենցի, Աբովյանը հատկապես նշել է ռուսական գիտության առաջնությունը՝ «Լոմոնոսով ստեղծ գրքերականութիւն իւր, որում հետեւեցան Ռոտտէ գերմանացի, Լծլեօցեր»<sup>2</sup>:

Աբովյանը մեծագույն ուշադրություն է դարձրել նաև ռուսաց լեզվի դասավանդման վրա, որը ըստ նրա, լավագույն միջոց է ռուսական լուսավորությունն ու կուլտուրան հայ ժողովրդի մեջ տարածելու համար: Նա իր ղեկավարած դպրոցի նպատակն էր համարում Երնիկենի մեջ տարածել օգտավետ և անհրաժեշտ գիտությունը և նամանավանդ ռուս լեզվի գիտությունը, և դրանով հետզհետե տեղիս ազգերին բարձրացնել բարոյապես և մտավորապես»<sup>3</sup>:

Աբովյանը բավական ռուսերեն գիտեր ղեռ էջմիածնում, ա-

<sup>1</sup> «Նոր տեսական և գործնական քերականություն», Թերթ 7:

<sup>2</sup> Նույն տեղ, Թերթ 6:

<sup>3</sup> «Դիւան Զ. Աբովյանի», I հ., էջ 153—154:

վելին, միակն էր իբրև ուսագետ, որի համար և եղավ Պարբերական Թարգմանք Արարատի գագաթը բարձրանալիս:

Դորպատում ևս նա եռանդով շարունակում է ուսումնասիրել ուսաց լեզուն: 1834 թվի հունիսի 10-ին ներսն Աշտարակեցուն գրած նամակում Աբովյանը ասում է. «Հոկտեմբեր ամսից մինչև հունվար ես ուզում եմ մնալ Պետերբուրգում կամ Մոսկվայում ուսերենը հաստատապես սովորելու համար»:<sup>1</sup>

Իր կյանքի հետզոդարարության շրջանում Աբովյանը ուսաց լեզու էր դասավանդում Թրիխիսի և Երևանի գավառական դպրոցներում և իր մասնավոր պանսիոնում: Աբովյանը աշակերտների համար ուսաց լեզուն խիստ անհրաժեշտ է համարում, որովհետև ըստ նրա ժողովրդական պետք է հիմք լինի դպրոցում դասավանդվող բոլոր մյուս առարկաների, և առանց պարզ ու հիշող հասկանալու այն, բնականապես առաջ կգա միայն և միայն առարկաների մեքենայական ուսումնասիրությունը:<sup>2</sup>

Ասկայն, այդ բոլորի հետ միասին, մեր մեծ լուսավորիչը պայքարել է հայ վերնախավերի՝ «մայրաքաղաքում կրթվածների» այն զգվելի տրագիկությանի դեմ, երբ նրանք իբրև իրենց գիտությունների ասպացույց աղավաղում էին և հայերեն և ռուսերեն լեզուները, անտեղի կերպով խառնելով հայերեն լեզվին ռուսերեն բառեր. «Ախր որ ասում ես փրովուլիպարսա արի, սբուչնա եմ, օփի-ժարսա էլա, փրոշենի տվի, սանյարին շատ ունիմ, դուխս քու-ժիքսա էլալ, փեզենտնի մարդ ա, բազիլյունիլ ա, յափեթնիլ օբմին ես, զնանք քուխաթսա բլինք, սուխանիեմեն եմ գալիս, փրոփգարսա արի, համփին ֆսեթիք ութուփն ա, շատ խափոթ սուլիթսա չի բլում և այլն»:

Աչքին լի'ս, մի' մտածիր թե լսողն ի'նչ կասի: Իսկ գիտուն, լուսավորյալ մարդը նա է, որ ամեն լեզու քանի կարա, խոսակ խոսա: Դու քո լեզուն, որ խոսակ խոսաս ի'նչ վնաս ունի, հենց գիտում ես խելքդ ձեռիցդ կառնեն, թե սովորած իմաստությունդ չուրը կրթափի»:<sup>3</sup>

Աբովյանն այդ «գիտունների» արածը սուր ծաղրի է ենթարկում հետևյալ համեմատությամբ. «Խառնի'ր քո սիրական խաշի

<sup>1</sup> Մոսկվեական Գրականության թիւեր, 1911 թ. № 11, էջ 97:

<sup>2</sup> Դիվան Թ. Աբովյանի, I հ., էջ 138—139:

<sup>3</sup> Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 80. Ընդգծումները հեղինակինն են:

հետ՝ ձուկը, շաքար, կանֆետ (շաքարեղեն), շամիչ, չիր, խիզիրլա-  
լա, տես ի՞նչ համ կունենաս<sup>1</sup>։

Ուրեմն Աբովյանը մայրենի լեզվի դարգացման հետ միա-  
սին դնում է ուսաց լեզվի հիմնավոր ուսումնասիրման հարցը,  
երբեք, սակայն, չհակադրելով հայերեն և ռուսերեն լեզուները մի-  
մյանց և մեկը շառաչադրելով մյուսի հաշվին։ Այդ տեսակետից  
հետաքրքրական փաստ է Աբովյանի ուսպորտը անդրկովկասյան  
դպրոցների վերատեսուչ Հեսսեն Մյուլլերին, որով նա թույլ-  
տվություն է խնդրում իր ղեկավարած դպրոցում առաջին իսկ դա-  
սարանից հայերեն և վրացերեն անցնել։

«Ենձ հանձնված դպրոցի աշակերտների ծնողներից շատերը և  
մինչև իսկ, կարելի է ասել, ամենքը,— գրում է Աբովյանը,—  
խնդրում են ինձ, որ առաջին դասարանում դասատուվի իրենց զա-  
վակներին հայ և վրաց լեզուները։ Նրանց ալդպիսի ցանկության  
բավարարություն տալու համար, ցանկություն, որ բարի նպատակ  
ունի այն մտքով, որ բարձր դասարան փոխադրված աշակերտները  
հետագայում դժվարություն են քաշում այդ լեզուների գիտության  
մեջ, որոնք չեն դասատուվել առաջին դասարանում։

Եւ, համակերպվելով հասարակության ցանկությանը, նամա-  
նավանդ որ տեղիս զավատական դպրոցի աշակերտները մեծ մա-  
սով հայեր են, հարկավոր եմ համարում այդ մասին հարգանք  
զեկուցել Ձերդ բարեծննդության և խոնարհաբար խնդրել թույլ  
տալ դասավանդել աշակերտներին հայ և վրաց լեզուները, ինչպես  
որ այդ կատարվում է մյուս դպրոցներում»։

Աբովյանը հաշվական դպրոցների և առհասարակ ուս լե-  
զուն ուսումնասիրողների համար, կազմել է նաև ուսաց լեզվի  
քերականության շուրջ 400 էջանոց դասագիրք<sup>2</sup> («Նոր տեսական և  
գործնական քերականություն ուսաց վասն հայոց հանդերձ բա-  
ղում օրինակոր ՚ի պետս թարգմանութեան՝ ՚ի ուսաց լեզուէ ՚ի  
հայկական և հայկականէ ՚ի ռուս րոտ գլխավոր փանոնաց քերա-  
կանութեան, հանդերձ համառոտ քաղուածով պատմութեան ուս-  
աց»)։

<sup>1</sup> Աբովյան, Ընտիր երկեր, հատոր առաջին, 1939, էջ 80.

<sup>2</sup> Իր այդ գրքի նպատակների մասին Աբովյանը գրում է. «Чувствуя недостаток учебника, я принимаясь за составление его, в желании до-  
ставить тем пользу как здешним учащимся, так и многим моим сооте-  
чественникам, обитающим в Турнии, Персии и Индии, которые охотно  
бы пожелали познакомиться с этим языком, имея в руках хорошее  
руководство».



Այս գրքին կցված ռուսերեն ինքնագիրը անաշարանում<sup>1</sup> Пре-  
дисловие к теоретическо-практической грамматике со-  
ставленной на русском и армянском языках по руководст-  
ву Тапе) Արտվյանն ասում է, որ որևէ լեզվի ուսումնասիրու-  
թյունը նպատակ ունի «более образовать душ и чувства наши  
чтением различных творений на оном» և որ ամենազիջալորն  
է մեզ հետաքրքրող ինգրի տեսակետից «подружиться с духом  
того народа, котораго языку мы учимся». Այդ տեսակետից  
կրնելով Արտվյանը փնտհտում է ռուսաց լեզուն հայ ժողովրդի  
համար՝ իբրև բոլոր լեզուներից ամենակարևորը. «Какой из Вос-  
точных, или из Западных языков может в этом отношении  
споспешествовать нашей нации более всех, как не русский,  
котораго польза и качества заставили и образованных на-  
родов нашего времени заниматься им, тем более армян,  
которые видят всю необходимость изучения его».

Մի այլ տեղ՝ դասագրքի «Հասկութիւն ռուսաց լեզուի» բաժ-  
նում (16-րդ պարագրաֆ) Արտվյանն ուղղակի գրում է. «Լեզուն  
ռուսաց է մինն յընդարձակագոյն և ամենահարկավոր լեզուաց ի  
վերայ երկրի» և այդ ոչ միայն այն պատճառով, որ նրանով բազ-  
մամիլիոն մարդիկ են խոսում, այլ նաև նրա համար, որ շատ լե-  
զուներ ընդ նմա շառավիղ միոյ և նոյն արմատոյ»:

Արտվյանի արվիվում այժմ պահւում են ռուսաց լեզվով գրած  
նրա բազմաթիվ գրությունները, հոդվածները, ուսումնասիրություն-  
ներն ու դասագրքերը:

1845 թ. հոկտեմբերի 24-ին իր տված վերառեսչական պաշ-  
տոնական հաշվետւության մեջ, Արտվյանը գրում է, «Որպէս անունը  
պետք է մեզ համար լինի սուրբ, ինչպես և նրա արյունը, որով  
մենք ազատուիլ ենք ընդմիջւոյ... Աշխատենք, ըստ մեզ կարողու-  
թյան և հնարավորության, ձեռք բերել օգտավետ գիտություններ,  
կրթել մեր միտքն ու սիրտը, ձեռք բերել ռուս լեզվի գիտություն և  
բարի քաղաքացիներ լինել: Սրանով, հենց միակ սրանով, քան մի  
ուրիշ բանով, մենք կարող կլինենք միանալ ռուս մեծ ազգի հետ,  
որի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ օտարին, սեր  
և անձնավորություն... Կեցցե՛ք Ռուսաստանը»:<sup>2</sup>

<sup>1</sup> Գիրքը չի տպագրվել: Ինքնագիրը գտնվում է Երևանի Գրական Թան-  
գարանում: Արտվյանի արվիվ, գործ № 27:

<sup>2</sup> «Դիվան Խ. Արտվյանի», ի հ., էջ 158: